



Հայաստանի
Հանրապետություն

Հողերի և տեղական
համայնքների


Հայաստանի Հանրապետության Քարտեզագրություն



Ցանկ

ՀՀ Վարչատարածքային քարտեզ.....	2
Բնություն.....	Ошибка! Закладка не определена.
Մակերևութի ձևագրություն.....	Ошибка! Закладка не определена.
Ռելիեֆ առաջացնող արտածին երևույթներ.....	6
Ագրոկլիմայական ռեսուրսներ.....	7
Հողեր.....	Ошибка! Закладка не определена.
Բուսականություն.....	Ошибка! Закладка не определена.
Վայրի օգտակար բուսականություն.....	Ошибка! Закладка не определена.
Էնդեմիկ բուսականություն.....	Ошибка! Закладка не определена.
Հայաստանի Կարմիր գիրք.....	Ошибка! Закладка не определена.
Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	Ошибка! Закладка не определена.
ՀՀ մարզերն ըստ մշակվող բուսատեսակների	22
Խաղողագործություն.....	22
Պտղաբուծություն	23
Հացահատիկային մշակաբույսեր	24
Կարտոֆիլ	24
Բանջարաբուստանային մշակաբույսեր.....	26
Կերային մշակաբույսեր.....	27
Վերջաբան.....	Ошибка! Закладка не определена.

ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ



Հայաստանի Հանրապետության տարածքը կազմում է 29743կմ², մայրաքաղաքն է Երևանը: Հայաստանն ունի 10 մարզեր, ինչպես նաև մարզային կարգավիճակ ունեցող քաղաք Երևան: Քաղաքների թիվը կազմում է 49, քաղաքային համայնքների թիվը՝ 49, գյուղերի թիվը՝ 950, գյուղական համայնքների թիվը՝ 866:

ՄԱՐԶ	ՏԱՐԱԾՔ	ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆ
Արագածոտն	2,8000 կմ ²	Աշտարակ
Արարատ	2,1000 կմ ²	Արտաշատ
Արմավիր	1,2000 կմ ²	Արմավիր
Գեղարքունիք	5,3000 կմ ²	Գավառ
Լոռի	3,8000 կմ ²	Վանաձոր
Կոտայք	2,1000 կմ ²	Հրազդան
Շիրակ	2,7000 կմ ²	Գյումրի
Սյունիք	4,5000 կմ ²	Կապան
Վայոց Ձոր	2,3000 կմ ²	Եղեգնաձոր
Տավուշ	2,7000 կմ ²	Իջևան
Երևան	0,2000 կմ ²	

ԲՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ժամանակակից բարդ ռելիեֆը ձևավորվել է երկրի ներածին և արտածին գործոնների փոխներգործության պայմաններում: Ծովի հատակում գոյացած հզոր շերտախմբերը, ներածին ուժերի ներգործությամբ, ենթարկվել են ծալքավորման և ծովի մակարդակի իջեցումով պայմանավորված՝ վերածվել են ներկայիս ծալքավոր լեռների: Դրանք ժամանակի ընթացքում բեկորատվել են, փոփոխվել են նաև հրաբխի ու արտաքին գործոնների՝ հոդմահարման ու տեղատարման ազդեցությամբ, և ձևավորվել է արդի ռելիեֆը, որի համար բնորոշ են խոշոր լեռնավահանները, լեռնազանգվածները, լավային սարավանդ-սարահարթերը (տեկտոնահրաբխային և հրաբխաերոզիոն ռելիեֆ), ինչպես նաև միջլեռնային գոգավորությունները և ռելիեֆի այլ ձևերը:

Բարդ ռելիեֆի ազդեցությամբ և բազմազան կլիմայական պայմաններում մեր երկրում ձևավորվել են բնական լանդշաֆտներ և դրանց բաղադրիչների բացառիկ բազմազանություն:

Հայաստանի 4 տասնյակ հազար կմ² տարածքի ամենացածր (ծովի մակարդակից 110մ բարձրություն) և ամենաբարձր (ծովի մակարդակից 4090մ բարձրություն) կետերի բարձրությունների տարբերությունը կազմում է գրեթե 4000մ:

Դրա շնորհիվ ընդամենը մի քանի տասնյակ կմ տարածության վրա բնությունն անճանաչելիորեն փոխվում է: Փոխվում են կլիմայական պայմանները, հողային ծածկույթը, բուսական ու կենդանական աշխարհը:

Բացառիկ բազմազանությամբ աչքի է ընկնում բուսական աշխարհը: Գրանցված են 3200 բարձրակարգ բուսատեսակ, այսինքն՝ յուրաքանչյուր 1000կմ²-ու վրա մոտ 107 տեսակ: Սա ավելին է, քան երկրագնդի հասարակածային գոտում: Հայտնաբերված է 130 էնդեմիկ բուսատեսակ, որոնք աշխարհի այլ վայրերում բացակայում են: Այդպիսին են օրինակ՝ հայաստանյան քարխոտը, արարատյան կաթնբեկը, նաիրյան նշենին, Ալագյազի կատվադադը, Ախուրյանի հաղարջենին և այլն:

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՁԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բնական պայմանների խիստ բազմազանությունն ու վերընթաց գոտիականությունը պայմանավորված են բարդ ռելիեֆով, տարածքի բացարձակ ու հարաբերական բարձրությունների մեծ տատանումներով, կառուցվածքային ձևերի առանձնահատկություններով: Տարածքի 9,9 %-ն ունի մինչև 1000մ բարձրություն, 18,3%-ը՝ 1000-1500մ, 31,3 %-ը՝ 1500-2000մ, 24,5 %-ը՝ 2000-2500մ, 16 %-ը 2500մ: Հանրապետության ամենացածրադիր վայրերն ունեն 375մ բարձրություններ (Դեբեդի հովիտ, Բագրատաշեն գյուղից 2կմ հյուսիս) և 380մ բարձրություններ (Արաքսի հովիտ, Նոնաձոր գյուղ), առավելագույնը 4090մ է (Արագած լեռ), միջինը՝ 1830մ:

🌄 Լեռներ

- Բարձր լեռնային գոտի (2800մ բարձրություն)

Այս գոտու ձևագրությանը հատուկ են զառիթափ, ուղիղ լանջերով, հովտաձորակային ցանցով խիտ ու խոր մասնատված տարածքներ, որոնք հանդիպում են հատկապես Շիրակի, Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզերում:

- Միջլեռնային գոտի (1500-2800մ բարձրություն)

Միջլեռնային գոտուն հատուկ են զառիթափ, ուղիղ լանջերով, աստիճանակերպ կատարով, V-աձև հովիտներով և կիրճերով խոր մասնատված տարածքներ, որոնք հանդիպում են Լոռու, Տավուշի, Սյունիքի, Արարատի, Կոտայքի մարզերում:

Միջլեռնային գոտում հանդիպում են նաև անհամաչափ, աստիճանակերպ լանջերով, V-աձև հովիտներով և կիրճերով խոր մասնատված, չափավոր զառիթափ-գոգավոր լանջերով, մասնատված հովտաձորակային ցանցով տարածություններ, որոնք



հատուկ են Լոռու, Սյունիքի, Տավուշի, Արարատի, Վայոց Ձորի մարզերում, ինչպես նաև հանդիպում են ուռուցիկ լանջերով զմբեթաձև լեռնազանգվածներ՝ մասնատված հովտաձորակային ցանցով տարածքներ:

1. Ցածրալեռնային գոտի (մինչև 1500մ)

Այս գոտուն հատուկ են մեղմաթեք, մասամբ ժայռոտ լանջերով, մասնատված V-աձև, երբեմն արկղաձև հովիտներով տարածքներ, խիստ մասնատված, հաճախ անհամաչափ լանջերով լերկուտներ, որոնք հատկապես հանդիպում են Տավուշի և Սյունիքի մարզերում:

2. Վահանաձև բարձրադիր լեռներ (2800մ և բարձր)

Այս գոտուն հատուկ են թույլ մասնատված, մեղմաթեք աստիճանակերպ լանջերով տարածքներ՝ Շիրակի, Արագածոտնի, Սյունիքի մարզերում, աստիճանակերպ լանջերով, մասնատված U-աձև հովիտներով տարածքներ՝ Արագածոտնի, Լոռի, Վայոց Ձորի մարզերում, մեղմաթեք, բլրավետ լանջերով, մասնատված V-աձև հովիտներով տարածքներ՝ Արարատի, Վայոց Ձորի մարզերում:

- Սարահարթեր և սարավանդներ

Մերձգագաթային, հորիզոնականին մոտ, թույլ թեք, մասամբ բլրավետ տարածքներ՝ Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիքի մարզերում, ալիքավոր-բլրավետ, թույլ մասնատված տարածքներ՝ Գեղարքունիքի, Արարատի, Տավուշի մարզերում:

3. Միջին բարձրություն (1500-2500մ)

Միջին բարձրության գոտուն հատուկ են հորիզոնականին մոտ, թեք, մասամբ աստիճանակերպ, չափավոր մասնատված (մինչև 2500մ) տարածքներ, որոնք ընդգրկում են Շիրակի, Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի մարզերը, նաև հորիզոնականին մոտ, մասամբ դարավանդավորված, թույլ ալիքավոր (1500-2500մ) տարածքներ, որոնք հատկապես տարածվում է Շիրակի մարզում:

4. Ցածրադիր (մինչև 1500մ)

Ցածրադիր գոտում են գտնվում ալիքավոր դարավանդավորված տարածքներ՝ Լոռու, Շիրակի, Սյունիքի մարզերում, գետահովիտներ՝ Տավուշի, Լոռու, Կոտայքի, Արագածոտնի, Արարատի, Վայոց Ձորի, Արմավիրի մարզերում, կանիոններ և կիրճեր՝ Շիրակի, Լոռու, Արարատի, Վայոց Ձորի մարզերում:

Արագածոտնի մարզում է գտնվում առավելագույն բարձրություն ունեցող կոնաձև Արագածի լեռը (4090մ), Կոտայքի մարզում՝ Արայի լեռը (2605մ), Գեղարքունիքի մարզում՝ Աժդահակի լեռը (3597մ):


2900-300° C և ավելի ջերմաստիճանների գումարն ապահովում է խաղողի, դեղձի, նշի և այլ ջերմասեր մշակաբույսերի բերքի հասունացումը, իսկ 1400-2000° C -ը բարեխառն գոտու մշակաբույսերի՝ հացահատիկի, կարտոֆիլի, շաքարի ճակնդեղի, պտղատուների և այլնի հասունացումը:

Եթե մթնոլորտային տեղումների քանակը փոքր է գոլորշունակությունից, բույսերի բնական խոնավապահովվածությունն անբավարար է՝ պահանջվում է ոռոգում, երաշտների հավանականությունը մեծ է, հավասարի դեպքում՝ լավ է, իսկ եթե տեղումները գերազանցում են գոլորշունակությանը, կարող է ստեղծվել գերխոնավ իրավիճակ:

Մշակաբույսերի միջահաս տեսակների ջերմաստիճանների գումարի պահանջը և մշակման վերին սահմանը

ԲՈՒՍԱՏԵՍԱԿ	ԱՐԱՔՍԻ ԱՎԱԶԱՆ	ԿՈՒՐԻ ԱՎԱԶԱՆ
Գարնանացան ցորենի մոմային հասունություն	1900° C	1600° C
Գարնանացան գարու մոմային հասունություն	2050° C	1825° C
Աշնանացան ցորենի մոմային հասունություն	1925° C	1675° C
Եգիպտացորենի մոմային հասունություն	1800° C	1500° C
Կարտոֆիլի հասունություն	2100° C	1875° C
Լոլիկի կարմիր հասունություն	2000° C	1750° C
Ծխախոտի տերևաքաղ	2000° C	1750° C
Շաքարի ճակնդեղի բերքահավաք	1675° C	1375° C
Խաղողի հասունություն	1400° C	850° C
Ծիրանի հասունություն	1600° C	1400° C
Դեղձի հասունություն	1400° C	850° C

ՀՈՂԵՐ



1. Լեռնամարգագետնային

Տարածվում են 2000-2400մ բարձրություններում, բնորոշվում են հումուսի բարձր պարունակությամբ (13-20%), թեթև մեխանիկական կազմով, փխրուն կառուցվածքով, միջինից ցածր կլանունակությամբ (15-20մգ/էկվ), $pH=4,8-5,5$, բարենպաստ ջրաֆիզիկական հատկություններով՝ Շիրակի, Լոռու, Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի մարզեր:

2. Մարգագետնային

Տարածվում են 1800-2400մ բարձրություններում, բնորոշվում են հումուսի համեմատաբար բարձր պարունակությամբ (8-3%), $pH=5,5-6,8$, կլանման մեծ ծավալով, 19 միջին և ծանր կավավազային մեխանիկական կազմով և բարենպաստ ջրաֆիզիկական հատկություններով՝ Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Տավուշի մարզեր:

3. Անտառային գորշ

Տարածվում են 1300-1800մ բարձրություններում, բնորոշվում են հումուսի 4-8% պարունակությամբ, միջին կլանունակությամբ (28-34մգ/էկվ), $pH=4,6-5,9$, ջրաֆիզիկական հատկությունների բավարար ցուցանիշներով՝ Լոռու, Տավուշի մարզեր:

4. Անտառային դարչնագույն

Տարածվում են հիմնականում Սյունիքի մարզի 800-2400մ բարձրություններում, բնորոշվում են կավայնացմամբ, զգալի քարքարոտությամբ, կավավազային և կավային մեխանիկական կազմով, զգալի հումուսացվածությամբ (30-44մգ/էկվ)՝ կարբոնատների պարունակությամբ, բավարար ջրաֆիզիկական հատկություններով՝ Վայոց Ձորի, Սյունիքի, Կոտայքի, Լոռու, Տավուշի մարզեր:

5. Սևահողեր

Տարածվում են 1200-2400մ բարձրություններում, բնորոշվում են հումուսի 3,5-12,0% պարունակությամբ, միջինից բարձր կլանունակությամբ (35-55մգ/էկվ), $pH=6,0-8,2$, նյութական կազմի և ջրաֆիզիկական հատկությունների լավագույն ցուցանիշներով՝ Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի, Լոռու մարզեր:

6. Մուգ շագանակագույն, շագանակագույն, բաց շագանակագույն

Տարածվում են 1000-1400մ բարձրություններում: Այդ հողերին բնորոշ են հումուսի միջին պարունակությունը (2-4%), քարքարոտությունը, խիստ արտահայտված իլյուվիալ-կարբոնատային հորիզոնի առկայությունը, որը ցեմենտացված վիճակում է, $pH=7,4-8,5$, ինչպես նաև հողալկալի հիմքերով հագեցած միջին կլանման ծավալ (30-35մգ/էկվ), անբարենպաստ ջրաֆիզիկական հատկություններ՝ Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզեր:

7. Կիսաանապատային գորշ

Տարածվում են 800-1000մ բարձրություններում, որոնց բնորոշ են հումուսային հորիզոնի ոչ մեծ հզորություն (25-40սմ) և հումուսի ցածր պարունակություն (2%), քարքարոտություն, կմախքայնություն, կարբոնատների զգալի պարունակություն: Կարբոնատային հորիզոնից ցած հանդիպում են ցեմենտացված կարբոնատային և գիպսակիր շերտեր: Տեղ-տեղ նկատվում են աղակալումներ, որոնք ունեն թույլ կլանունակություն (20-30մգ/էկվ), անբավարար ջրաֆիզիկական հատկություններ՝ հագեցած հողալկալի հիմքերով ($pH=7,5-8,5$)՝ Արագածոտնի, Արմավիրի, Արարատի մարզեր:

8. Ոռոգելի

Տարածվում են Արարատյան հարթավայրի սահմաններում, որոնց բնորոշ են պրոֆիլի զգալի հզորություն (80-120սմ), թույլ հումուսացվածություն (1,5-2,0%), կարբոնատություն (3,7%), հիմնային ռեակցիա ($pH=8,2-8,5$), միջին կլանման ծավալը՝ 30-40մգ/էկվ: Ունեն կավային և կավավազային մեխանիկական կազմ, բավարար ջրաֆիզիկական հատկություններ: Հանդիպում են տարածքներ, որոնք

հանքայնացված գետնաջրերի ազդեցության տակ թույլ աղակալված են և ակալիացված՝ Արարատի, Արմավիրի մարզեր:

9. Գետահովտային

Գոյացել են գետերի հովիտներում և Սևանա լճի ջրերից ազատված առափնյա հատվածներում: Այդ հողերին բնորոշ են հումուսի ցածր (1-2%) պարունակությունը, զգալի է կլանված մագնեզիումի պարունակությունը, pH=6,9-8,1, կլանման ծավալը՝ 14-35մգ/էկվ՝ Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու մարզեր:


10. Հողագրունտներ թույլ զարգացած ավազակոպճային

Ձևավորվել են Սևանա լճի ջրերից ազատված տարածքներում, բնորոշվում են ավազակավային մեխանիկական կազմով, խճային կառուցվածքով, հումուսի շատ ցածր պարունակությամբ (0,3-0,5%)՝ Գեղարքունիքի մարզի Սևանի ավազանի շրջակայքում:

ՀՈՂԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ	ՏԱՐԱԾՈՒՄԸ	ՀՈՒՄՈՒՍԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ	ՀՈՒՄՈՒՄԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
Լեռնամարգագետնային հողեր	Հրաբխային լեռնազանգվածների և ծալքաբեկորավոր լեռնաշղթաների մինչև 3300մ բարձրություններում	20-30սմ	7-8%
Կիսաանապատային գորշ հողեր	Արարատյան գոգավորություն, Եղվարդի և Կարմրաշենի սարվանդաններ, Երանոսի և Ուրծի լեռներ, Խոր Վիրապ	30-40սմ	1-1,5%
Լեռնաշագանակագույն հողեր	Արարատյան գոգավորությունում, հարավ-արևելքում	45-60սմ	3-4%
Լեռնային սևահողեր	Շիրակի և Լոռվա դաշտերում, Սևանի ավազանում, Վայոց ձորի և Սյունիքի լեռնալանջերում	55-75սմ	9-12%
Լեռնանտառային դարչնագույն հողեր	Անտառային գոտու ցածրադիր տեղամասերում	55-65սմ	6-8%

Լեռնանտառային գորշ հողեր	Անտառային գոտու միջին և բրձրադիր տեղամասերում, հյուսիս-արևելյան անտառներում	50-55սմ	4-5%
Մարգագետնա-տափաստանային հողեր	Լեռնային սևահողերից և լեռնանտառային գորշ հողերից վերև՝ 2100-2700մ բարձրություններում	40-45սմ	8-11%

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



1. Մարգագետնային բուսականություն

Հանդիպում են բարձրալայան տաքախոտա-հացազգա-բոշխային (գորգեր) մասնակցությամբ՝ *Campanula tridentata* Schreb., *Carex tristis* Bieb., *Taraxacum stevenii* DC., *Plantago saxatilis* Bieb., *Colpodium araraticum* Tarytv., *Poa alpine* L., *Carum caucasicum* (Bieb.) Boiss., *Nardus glabriculum* Sakalo., *Sibbaldia parviflora* Willd.

Ցածրալայան (ենթալայան) հացազգիների և տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ *Bromopsis variegata* (Bieb.) Holub., *Hordeum violaceum* Boiss. Et Huet, *Anemonastrum fasciculatum* (L.) Holub., *Betonika makrantha* C. Koch., *Veronica*, *Gentiana*, *Cephalaria*, *Inula*, *Myosotis* ցեղի տեսակների հետ համատեղ:

Այս տեսակները հատկապես մեծ տարածում ունեն Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի մարզերում:

2. Մարգագետնատափաստանային բուսականություն

Այս բուսականության տեսակներից են՝ *Festuca versicolor* Tausch., *F. ovina* L., *F. valesiaca* Gaudin, *Phleum pratense* L., *Hordeum violaceum* Boiss. Et Huet., *Carex humilis* Leys, *Trifolium ambiguum* L., որոնք հատկապես տարածված են Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերում:

3. Անտառային բուսականություն

Լայնատերև, մասնակցությամբ՝ հաճարենու (*Fagus orientalis* Lipsky), կաղնու (*Quercum iberica* Stev. *Q. macranthera* Fisch. Et Mey. ex Hohen), րոխու (*Carpinus betulus* L., *C. orientalis* Mill.), հացենու (*Fraxinus excelsior* L.), լորենու (*Tilia begoniifolia* Stev.):

Կաղնուտներ, մասնակցությամբ՝ *Quercus macranthera* Fisch. Et Mey. ex Hohen., *Q. boissieri* Beut., *Q. araxina* (Trautv.) Grossh:

Անտառային խառը մշակաբույսեր, մասնակցությամբ՝ *Pinus pallasiana* D. Don., *P. Banksiana* Lambs., *Fraxinus excelsior* L., *Hippophae rhamnoides* L., տեսակներ *Salix*, *Acer*, *Ulmus* և ավազուտային տարախոտերի:

Այս բուսատեսակները հատկապես բնորոշ են Սյունիքի, Տավուշի, Կոտայքի մարզերին:

4. Քսերոֆիլ նոսրանտառային բուսականություն

Գիհու խառը, մասնակցությամբ՝ *Juniperus polycarpus* C. Koch., *J. oblonga* Bieb., *J. hemisphaerica* J. et C. presl., *J. foetidissima* Willd., *J. Sabina* L., *Ephedra procera* Fisch et Mey:

Սաղարթավոր խառը, մասնակցությամբ՝ *Paliurus spina-xhristi* Mill., *Spiraea crenata* L., *Anugdalus fenzliana* (Fritsch) Lipsky, *Pistacia nutica* Fisch. Et Mey. *Celtis glabrata* Stev. Ex Planch., *Cerasus incana* (Pall.) Spach, *Pyrus salicifolia* Pall, որոնք մեծամասամբ հանդիպում են Տավուշի մարզում:

5. Տափաստանային բուսականություն

Հացազգային, տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ *Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albobii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Botriochloa ischaemum* (L.) Keng., *Stipa capillata* L., *S. lessingiana* Trin. et Rupr., *S. tirsia* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*:

Տափաստանային բուսականության մեծ բազմազանությամբ հայտնի են Սյունիքի, Գեղարքունիքի, Արարատի, Կոտայքի, Շիրակի մարզերը:

6. Կիսաանապատային, անապատային բուսականություն

Օշինդրա-էֆեմերային, մասնակցությամբ՝ *Artemisia fragrans* Willd., *Kochia prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. Et Ikonn., *Atraphaxis spinosa* L., *Rhamnus pallasii* Fisch. Et Mey., *Tanacetum*, *Eremopyrum*, *Alyssum*, *Aeluropus littoralis* (Gouan) Parl:

Հալոֆիլ, մասնակցությամբ՝ *Salsola ericoides* Bieb., *S. Dendroides* Pall., *S. nitraria* Pall., *S. nitraria* Pall., *Halocnemum strobilaceum* (Pall.) Bieb:

Գիպսոֆիլ, մասնակցությամբ՝ *Salsola cana* C. Koch., *S. tomentosa* (Moq.) Spach, *S. Gemmanscens* Pall., *Gypsophila aretioides* Boiss., *Halanthium rarifolium* C. Koch., *Cephalorrhynchus takhdazhianii* (Sosn.) Kirp:

Պսամոֆիլ, մասնակցությամբ՝ *Calligonum polygonoides* L., *Achillea tenuifolia* Lam., *Salsola tamamschjanae* Iljin, *Stipagrostis plumose* (L.) Munro ex T. Anders., *Astragalus paradoxus* Bunge:

Այս բուսատեսակները մեծ տարածում ունեն Արարատի, Արմավիրի, Վայոց Ձորի մարզերում:

80

[illegible]

Մասշտաբ 1:1 000 000

Առանձին մարզերում կարելի է հանդիպել նաև հետևյալ վայրի բուսատեսակների՝
 Լորենի կովկասյան, *Tilia caucasica*Է՝ Սյունիքի, Կոտայքի, Տավուշի, Լոռու մարզեր,

Դանձլամեռ սպիտակ՝ Գեղարքունիքի, Լոռու մարզեր, Ջիափուշ դժնիկանման, Hippophae rhamnoides՝ Սյունիքի, Գեղարքունիքի, Արարատի, Շիրակի մարզեր, Մատուտակ հարթ, Glycyrrhiza Glabra՝ Արմավիրի, Արարատի, Սյունիքի, Շիրակի մարզեր, Արոսենի սովորական, Sorbus aucuparia՝ Սյունիքի, Կոտայքի, Տավուշի, Լոռու մարզեր:

ԷՆԴԵՄԻԿ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Մասշտաբ 1:1 500 000

Էնդեմիկ են կոչվում բույսերի այն տեսակները, ցեղերը, ընտանիքները, որոնք հանդիպում են որոշակի տարածքներում և դուրս չեն գալիս նրանց սահմաններից:

Հայաստանը, չնայաց համեմատաբար փոքր տարածքի, բնութագրվում է էնդեմիզմի բարձր մակարդակով: Այստեղ հայտնաբերված են բարձրակարգ բույսերից ավելի քան 130 էնդեմիկ տեսակ:

Առանձին մարզեր բնութագրվում են իրենց յուրահատուկ բուսական բազմազանությամբ.

Շիրակ՝ կոկոռազգիներ՝ հաղարջենի ախուրյանի արայի լիճ, բարդածաղկավորներ՝ տերեփուկ հայաստանյան, տերեփուկ թախտաջանի, տերեփուկ թամանյանի թալին, ակքանազգիներ՝ ջիվան հայկական, թիթեռնածաղիկներ՝ գազ աղասու, փիփերթազգիներ՝ տուղտավարդ գրոսհեիմի գյումրի:

Լոռի, Տավուշ՝ սոխազգիներ՝ սոխ շտրուցլի, ակքանազգիներ՝ ջիվան հայկական, հիրիկազգիներ՝ թրաշուշան հայաստանյան սպիտակ, սրոհունդազգիներ՝ սրոհունդ Էլեոնորայի, փիփերթազգիներ՝ տուղտավարդ գրոսհեիմի նոյեմբերյան, Դիլիջան:

Կոտայք, Արմավիր, Արարատ՝ Հակինթազգիներ՝ աստղաշուշան գաբրիելյանի, հիրիկազգիներ՝ թրաշուշան հայաստանյան, շրթնաշաղկավորներ՝ կատվադաղձ ալազյազի, գորտնուկազգիներ՝ գորտնուկ արագածի, տորոնազգիներ՝ մակարդախոտ սոսնովսկու, ակքանազգիներ՝ ջիվան հայկական, խորդենազգիներ՝ ճայկտուց սոսնովսկու ապարան, արագած լեռ, կաթնախոտազգիներ՝ կաթնախոտ ուրարտական ծաղկածոր, կաթնախոտազգիներ՝ կաթնախոտ ուրարտական, ցախակեռասազգիներ՝ կտակենի տիգրանի, զանգակազգիներ՝ զանգակ խոցատովսկու չարենցավան, ճարագախոտազգիներ՝ ճարագախոտ շելկովնիկովի գառնի, իշակաթնուկազգիներ՝ իշակաթնուկ վեդու, կտավատազգիներ՝ կտավատ բարսեղյանի, բարդածաղկավորներ՝ տերեփուկ ֆայվուշի, կաթնբեկ արարատյան, սոխազգիներ՝ սոխ շտրուցլի, մեխակազգիներ՝ ալոխրոզա թախտաջանի, շնդեղազգիներ՝ շնդեղ նիանայի արտաշատ, վեդի, արարատ:


Գեղարքունիք՝ արճախոտազգիներ՝ ոգնաթուփ գաբրիելյան սևան, ակքանազգիներ՝ ջիվան հայկական, խորդենազգիներ՝ ճայկտուց սոսնովսկու, տորոնազգիներ՝ մակարդախոտ սոսնովսկու գավառ, ճրագախոտազգիներ՝ ճրագախոտ շելկովնիկովի, հիրիկազգիներ՝ թրաշուշան հայաստանյան, գողտիկազգիներ՝ քարխոտ հայաստանյան մարտունի, բարդածաղկավորներ՝ խոզանափուշ ֆյոդորովի, ակքանազգիներ՝ ջիվան հայկական, հացազգիներ՝ փետրախոտ գեղարքունու ճամբարակ:

Վայոց ձոր՝ ակքանազգիներ՝ ջիվան հայկական, հովանոցավորներ՝ ամիրնիոպսիս հայկական, կապնդեղ նրբաճյուղ, շնդեղազգիներ՝ շնդեղ նիանայի, բարդածաղկավորներ՝ տերեփուկ թամանյանի, գրոսհեյմիա կարլ-հենրիի,

ցախակեռասազգիներ՝ կտտկենի տիգրանի, վարդազգիներ՝ տանձենի դարալագյազի, տանձենի վորոնովի, ճրագախոտազգիներ՝ ճրագախոտ շելկովնիկովի, հիրիկազգիներ՝ թրաշուշան հայաստանյան:

Սյունիք՝ բարդածաղկավորներ՝ խոզանափուշ թախտաջանի, թիթեռնածաղկազգիներ՝ կուրկուրան բորդգիլովսկու, հիրիկազգիներ՝ թրաշուշան հայաստանյան սիսիան, բարդածաղկավորներ՝ խոզանափուշ թախտաջանի, ճրագախոտազգիներ՝ ճրագախոտ շելկովնիկովի, վարդազգիներ՝ նշենի նաիրյան գորիս, սրոհունդազգիներ՝ սրոհունդ էլեոնորայի, վարդազգիներ՝ նշենի նաիրյան, մոշենի թաղտաջանի կապան, վարդազգիներ՝ տանձենի դարալագյազի, տանձենի վորոնովի, տանձենի ռադդեյի, նշենի նաիրյան մեղրի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԳԻՐԳ



Հայաստանի Կարմիր գրքի բուսատեսակները նույնպես սփռված են Հայաստանի Հանրապետության մարզերում:

Շիրակ՝ թանթրվենի տիգրանի գյուրի, դակտիլորիզ կատառնյան, խոլորձ ստենի ամասիս:

Լոռի, Տավուշ՝ դակտիլորիդ կատառնյան տաշիր, խոլորձ ծիրանի ստեփանավան, էպիպոգիում անտերև, խոլորձ ստեննի դիլիջան, կոմուխ օշեի ալավերդի, խուրմա կովկասյան, երեքնուկ սեփաստյանի, կոռն փետրավոր, խոլորձ ծիրանի, շտերնֆերգիա խլոպուզածաղիկ նոյեմբերյան, խոլորձ ծիրանի, խուրմա կովկասյան, կոռն փետրավոր, թաղաղու դեղին, ստեննիելա սատիրանման իջևան, ստեննիելա սատիրանման, խոլորձ ծիրանի, կոռն փետրավոր, սրդակիր բոռակիր բերդ:


Արմավիր, Արարատ, Կոտայք՝ տերեփուկ հայաստանի, տերեփուկ թախտաջյանի, խավրծիլ հաղարջանման թալին, կոմուխ օշեի, գազ տարօրինակ մեծամոր, կտավախոտ բրգաձև, թանթրվենի տիգրանի եղվարդ, չարենցավան, ցորեն արարատյանա, ցորեն ուրարտու, թեզիում շովիցի, շտերնֆերգիա խլոպուզածաղիկ, ստեպտորամֆուս չերեպանովի, դակտիլորիդ կատառնյան գառնի, դակտիլորիդ կատառնյան, կոմուխ օշեի, խավրծիլ հաղարջանման, թեզիում շովիցի, ադիանթ, միկրոկնեմում մարջանանման վեդի, արարատ:

Գեղարքունիք՝ դակտիլորիդ կատառնյան գավառ, վարդենիս, գիհի կազակական սոթք, խոլորձ ծիրանի մարտունի:

Վայոց ձոր՝ սմիրնիոպսիս հայկական, գիհի կազակական, թեզիում շովիցի, թանթրվենի տիգրանի, ցորեն արարատյան, ստեպտորամֆուս չերեպանովի, օշակ մերկ, երնջնակ վանատուրի, ադիանթ, դակտիլորիդ կատառնյան:

Սյունիք՝ կոմուխ օշեի, ադիանթ տաթև, վավիլովիա նրբագեղ, վարդկակաչ խճճված քաջարան, վարդկակաչ խճճված, դակտիլորիդ կատառնյան, խոլորձ ծիրանի, երեքնուկ սեփաստիանի, ձեկվա բոխատերև, ստեննիելա սատիրանման, քաջվարդ նեղատերև կապան, սարդակիր կովկասյան, սարդակիր բոռակիր, դակտիլորիդ կատառնյան, խոլորձ ծիրանի, ստեննիելա սատիրանման, ձեկվա բոխատերև, գիհի կազակական, խուրմա կովկասյան, վարդկակաչ խճճված մեղրի:

ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ



Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ձևավորումը սկսվել է 1950թ-ից: Գործում են 3 պետական արգելոց՝ 39615 հա, 2 ազգային պարկ՝ 180100 հա, և 23 պետական արգելավայր՝ 103256 հա ընդհանուր մակերեսով: Պահպանության ենթակա են բուսական և կենդանական աշխարհի տեսակային կազմի մոտ 60%-ը:

1. ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑՆԵՐ

- **Էրեբունի**

Գտնվում է 1300-1400մ բացարձակ բարձրության վրա՝ կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիների անցումային հատվածում: Հանդիպում են շուրջ 230 տեսակի բույսեր: Նպատակն է պահպանել վայրի ցորենների աշխարհում եզակի գենոֆոնդը՝ վայրի միահատիկ ցորենը, վայրի ուրարտու ցորենը և վայրի երկհատիկ ցորենը:

- **Խոսքովի անտառ**

Գտնվում է 900-2400մ բացարձակ բարձրությունների սահմաններում: Նպատակն է կեննաչորասեր համակեցությունների պահպանությունը: Հայտնի են անոթավոր բույսերի մոտ 1800 տեսակ, որոնցից 146-ը զրանցված են Հայաստանի կարմիր գրքում:

- **Շիկահող**

Գտնվում է 700-2400մ բացարձակ բարձրությունների վրա: Պահպանվող օբյեկտներն են կաղնու և բոխու անտառները: Պահպանվել են երրորդական ժամանակաշրջանի ֆլորայի կղզյակներ՝ կենու պուրակը, արևելյան հաճարենու միակ փոքր պուրակը, ցրված հանդիպում է արևելյան սոսին:

2. ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԵՐ

- **Դիլիջան**

Գտնվում է 1070-2900մ բացարձակ բարձրությունների վրա: Պահպանվող օբյեկտներն են հաճարենու և կաղնու անտառները: Պահպանվել են երրորդական ժամանակաշրջանի ռելիկտներ՝ հատապտղային կենին, կոչիի սոճին և կովկասյան մրտավարդը:

- **Սևան**


Նպատակն է պահպանել Սևանա լճի բնական էկոհամակարգը: Հայաստանում տարածված 33 տեսակի ջրային բույսերից 19-ը աճում են այստեղ:

ՀՀ ՄԱՐԶԵՐՆ ԸՍՏ ՄՇԱԿՎՈՂ ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐԻ

Խաղողագործություն

172


ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ



Մասշտաբ 1:1 000 000


ՄԱՐԶ	ՏԱՐԱԾՔ
Արմավիր	5123 հա
Արարատ	3407 հա

Պտղաբուծություն




ՄԱՐԶ	ՏԱՐԱԾՔ	ՏԵՍԱԿ
Արմավիր	5846 հա	կորիզավորներ և հնդավորներ
Արարատ	5031 հա	կորիզավորներ և հնդավորներ
Արագածոտն	3301հա	կորիզավորներ, հնդավորներ և ընկուզապտուղներ
Կոտայք	3445 հա	կորիզավորներ, հնդավորներ և ընկուզապտուղներ
Վայոց Ձոր	1226 հա	կորիզավորներ, հնդավորներ և ընկուզապտուղներ
Սյունիք	2517 հա	կորիզավորներ, հնդավորներ և ընկուզապտուղներ

174




ՄԱՐԶ	ՏԱՐԱԾՔ	ՏԵՍԱԿ
Արմավիր	18597 հա	հիմնականում աշնանացան ցորեն
Արագածոտն	21791 հա	հիմնականում գարի և աշնանացան ցորեն
Շիրակ	43027 հա	հիմնականում աշնանացան ցորեն և գարի
Գեղարքունիք	40842 հա	աշնանացան ցորեն, գարնանացան ցորեն, գարի




ՄԱՐԶ	ՏԱՐԱԾԲ
Լոռի	6285 հա
Տավուշ	2585 հա
Գեղարքունիք	13133 հա

Բանջարաբուստանային մշակաբույսեր



ՄԱՐԶ	ՏԱՐԱԾՔ	ՏԵՍԱԿ
Արմավիր	10294հա	բոստանային մշակաբույսեր՝ ձմերուկ, սեխ դդում, նաև բանջարանոցային մշակաբույսեր
Արարատ	6950 հա	հիմնականում բոստանային մշակաբույսեր՝ ձմերուկ, սեխ դդում, քիչ քանակի բանջարանոցային մշակաբույսեր

Կերային մշակաբույսեր



ՄԱՐԶ	ՏԱՐԱԾՔ	ՏԵՍԱԿ
Արարատ	4439 հա	բազմամյա նաև միամյա խոտեր
Արագածոտն	5966 հա	հիմնականում բազմամյա խոտեր
Լոռի	13107 հա	Հիմնականում բազմամյա, քիչ քանակի միամյա նաև այլ տեսակների կերային բույսեր

ՎԵՐՋԱԲԱՆ

Ինչպես տեսնում ենք, տարածքով ոչ մեծ Հայաստանում, կարելի է տեսնել բոլորովին տարբեր բուսականությամբ ու բնապատկերներով շրջաններ: Արարատյան ծաղկուն դաշտը, հրաբխային նախալեռների տիեզերական բնապատկերները, Արագած լեռան վիթխարի գագաթներն ու ալպիական մարգագետինների գորգով ծածկված հզոր լանջերը, լեռնային Սևանա լիճն իր պարզությամբ ու մաքուր ջրով, արագահոս լեռնային գետերի հովիտները, Դիլիջանի և Ջերմուկի զով անտառները, Ագատ ու Արփա գետերի կիրճերի «Քարերի սիմֆոնիաները»՝ բազալտե բնական սյունաշարերը, Մետաքսի մեծ ճանապարհի կտրուկ շրջադարձերը, որտեղից մեր աչքերի առջև բացվում են բարձրլեռնային հիասքանչ բնապատկերներ, Ջանգեզուրի լեռնաշղթան՝ պատված վայրի նոնենիներով ու նշենիներով, կաղնու պուրակները Մեղրիում և Վայոց Ձորի տափաստանային հեռաստանները...



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսաապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):